

**Գավառի պետական համալսարանի խորհրդի**

**2010 թվականի փետրվարի 6 – ի նիստի**

**արձանագրություն**

**(թիվ 8)**

Ք. Գավառ

Սկիզբը՝ ժ. 12<sup>00</sup>

Ներկա էին խորհրդի 24 անդամներից 20 – ը:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատվեց նիստի հետևյալ օրակարգը.

1. Գավառի պետական համալսարանի 2008-2009 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը և զարգացման միտումները.
2. Գավառի պետական համալսարանի 2009 թվականի բյուջեի կատարման հաշվետվություն.
3. Գավառի պետական համալսարանի 2010 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշվի ներկայացում և հաստատում.
4. Ընթացիկ հարցեր:

Գավառի պետական համալսարանի՝ հաշվետու ժամանակաշրջանի գործունեության մասին զեկուցեց ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանը՝ պատկերաշարի օգնությամբ տեսանելի ու առարկայական դարձնելով կատարված բազմաբնույթ աշխատանքները ուսումնակրթական, գիտամեթոդական, դաստիարակչական, մշակութային, միջբուհական և

արտահամալսարանական փոխադարձ կապերի զարգացման, տնտեսական և այլ ուղղություններով:

Օրակարգի համաձայն՝ Ռ.Հակոբյանը հաշվետվություն ներկայացրեց Գավառի պետական համալսարանի 2009 թվականի բյուջեի կատարման մասին: Նշվեց, որ բյուջեն կատարվել է՝ համաձայն ԳՊՀ խորհրդի հաստատած նախահաշվի, և պատկան մարմինների կողմից համալսարանում կատարված տարաբնույթ ստուգումները ֆինանսական որևէ խախտում չեն հայտնաբերել:

Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ.Հակոբյանը ներկայացրեց նաև համալսարանի 2010 թ. ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը, որը կազմելիս հաշվի են առնվել առկա ֆինանսական ճգնաժամի պայմաններում համալսարանի իրական եկամուտները, և նպատակը եղել է դրանք ի նպաստ համալսարանի զարգացման կարիքների իսելամիտ ու նպատակային ձևով օգտագործելը:

Օրակարգի հարցերի վերաբերյալ ծավալվեց քննարկում: Մտքերի փոխանակությանը մասնակցեցին Է.Ղազարյանը, Ի.Խլղաթյանը, Վ.Խաչատրյանը, Ն. Պողոսյանը, Ն.Կուտուզյանը, Հր.Հակոբյանը: Նշվեց, որ հաշվետու ժամանակաընթացքում համալսարանում կատարվել են մեծ ծավալի բազմաբնույթ աշխատանքներ, զգալի են համալսարանի ձեռքբերումները ուսումնական, գիտական, կազմակերպական, տնտեսական և այլ բնագավառներում, նկատելի է ԳՊՀ վարկի բարձրացումը:

Հարց ու պատասխանի ընթացքում Է.Ղազարյանի հետաքրքրվեց ԳՊՀ – ում նոր մասնագիտությունների բացման հեռանկարների մասին: Ռ.Հակոբյանը նշեց, որ այդ ուղղությամբ աշխատանքներ են իրականացվում: Գեղարքունիքի մարզպետ Ն.Պողոսյանը ընդգծեց Գեղարքունիքի մարզում ԳՊՀ դերի կարևորությունը, մարզպետարանի և համալսարանի միջև սերտ կապերի առկայությունը, փոխգործակցության հետագա հնարավորությունները: Վ.Խաչատրյանը կարևորեց և դրական գնահատեց բուհում ուսանողների ակադեմիական շարժի ներկայացումը: Հր.Հակոբյանը կարևորեց ԳՊՀ-ում ուսման որակի բարձրացման ուղղությամբ տարվող հետևողական աշխատանքները՝ սկսած ակադեմիական պատճառներով հեռացումներից մինչև ավարտական քննություններին ուսանողների ջանադիր պատրաստումը: Նա մատնանշեց որակական փոփոխությունները

միջազգային կապերի առումով, բուհական կոնսորցիումի աշխատանքներին ԳՊՀ-ի ակտիվ մասնակցությունը: Հր.Հակոբյանը առաջարկեց ապագայում ակտիվացնել լրացուցիչ կրթական ծրագրերը՝ ապահովելով շարունակական կրթություն մարզում:

Խորհրդի անդամներն իրենց գոհունակությունն արտահայտեցին կատարված աշխատանքների և ներկայացված հաշվետվության վերաբերյալ:

Քվեարկության դրվեց Գավառի պետական համալսարանի 2010 թվի փետրվարի 6 – ի թիվ 8 նիստի որոշման նախագիծը: Բաց քվեարկությանը մասնակցեցին նիստին ներկա բոլոր 20 անդամները: Միաձայն ընդունվեց հետևյալ որոշումը.

Գավառի պետական համալսարանի խորհուրդը

### **Որոշեց.**

1. Գավառի պետական համալսարանի 2008-2009 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ ներկայացված հաշվետվությունը գնահատել բավարար և հավանություն տալ զարգացման ծրագրին.
2. Հաստատել Գավառի պետական համալսարանի 2009 թ. բյուջեի կատարման մասին հաշվետվությունը.
3. Հաստատել Գավառի պետական համալսարանի 2010 թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը.
4. Համալսարանում ստեղծել կառուցվածքային նոր ստորաբաժանումներ.  
ա) ԳՊՀ՝ հանրության հետ կապերի և լրատվության բաժին.  
բ) Որակի ապահովման բաժին՝ ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության կազմում:

ԳՊՀ խորհրդի նախագահ՝

Հ. Խ. Հակոբյան

ԳՊՀ խորհրդի քարտուղար՝

Վ. Լ. Կատվայան